ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հուլիսի 2023 թվականի N 674-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԱՅ ԳՅՈՒՂԻ <<ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ>> ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ, ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35–րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության համակարգող նախարարի 2020 թվականի մարտի 26–ի N 02-Ն հրամանով.

Որոշում եմ՝

1. 2023 թվականի օգոստոսի 15-ին՝ ժամը 13:00–ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գայ գյուղի <<Արվեստի դպրոց>> ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնի մրցույթ:

2. 2023 թվականի օգոստոսի 15-ին՝ ժամը 15:00–ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի <<Լուսագյուղի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնի մրցույթ:

3. Մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացնել ՀՀ տարածքային կառավարման նախարարության համակարգող նախարարի 2020 թվականի մարտի 26–ի N 02-Ն հրամանի պահանջներով:

4. Մրցույթի տեխնիկական սպասարկման աշխատանքները կազմակերպելու, մրցույթի մասին հայտարարություն հրապարակելու համար լիազոր անձ նշանակել

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՂԱՋԱՐ ՂԱՋԱՐՅԱՆ**

2023 թ. Հուլիսի 14
Արաքս համայնք